



**ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ
ԱՅՁԻ**

EAZA-ի և Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու մասնագետները Երևանի կենդանաբանական այգում են



Երևանի կենդանաբանական այգու տարեշրջանի պաշտոնական բացումը



Ապրիլի 9-ին Յանոշ Սանթոն, ով Ամստերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու համակարգողն է և Երևանի կենդանաբանական այգու Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) խորհրդատուն այցելեցին Երևանի կենդանաբանական այգի, հետևելու, թե ինչպես է ընթանում այգու բարեփոխման գործընթացը: Որպես EAZA-ի թեկնածու անդամ Երևանի կենդանաբանական այգու գործունեությունը հնգամյա ժամանակահատվածում պետք է համապատասխանեցվի Ասոցիացիայի ուղեցույցներով սահմանված կենդանիների բարեկեցության, անասնաբուժական, բազմացման և կրթական չափանիշներին:



Յանոշ Սանթոնի ուղեկցում էին իր երկու գործընկերները՝ Անաթալ Պերլինը և Ֆրանկ Վերստապենը: Անաթալ Պերլինն «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու կառավարման թիմի անդամ է և պատասխանատու է կրթության, մարկետինգի և մամուլի համար: Նա խորհրդատվություն տրամադրեց Երևանի կենդանաբանական այգու մամուլ և հաղորդակցության հարցերով զբաղվող թիմին հասարակայնության և ՉԼՄ-ների հետ աշխատանքների կազմակերպման և արդյունավետ ռազմավարության մշակման ուղղությամբ: Ֆրանկ Վերստապենը «Արտիս» թագավորական կենդանաբանական այգում աշխատում է որպես անասնաբույժ: Այցի ընթացքում վերջինս ստուգեց ոչ միայն Երևանի կենդանաբանական այգու անասնաբուժական պայմանները, այլ նաև լրացուցիչ սեմինար անցկացրեց այգու անասնաբուժական բաժնի աշխատակիցների համար: Այս սեմինարին մասնակցեցին նաև Թբիլիսիի կենդանաբանական այգու անասնաբույժները: Թբիլիսիի կենդանաբանական այգին 2012 թվականին ևս ստացել է EAZA թեկնածու անդամի կարգավիճակ:

Մասնագետներն իրենց հետ բերել էին դեղամիջոցներ և գործիքներ Նոր անասնաբուժական կենտրոնի համար, որը կառուցվելու է Երևանի կենդանաբանական այգում մինչև 2013-ի ավարտը: Այս ամենն «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու նվիրատվությունն է Երևանի կենդանաբանական այգուն՝ երկու հաստատությունների համագործակցության շրջանակներում: Սկսած 2011 թվականից «Արտիս» թագավորական կենդանաբանական այգին նվիրաբերել է մի շարք սարքավորումներ, դեղամիջոցներ՝ շուրջ 75.000 եվրո ընդհանուր արժողությամբ:

Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանի կարծիքով շարունակական համագործակցությունը և փորձի փոխանակումը EAZA խորհրդատու Յանոշ Սանթոնի և իր գործընկերների, ինչպես նաև «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու տնօրեն Հայկ Բալյանի հետ չափազանց արժեքավոր է Երևանի կենդանաբանական այգու զարգացման համար: Ռուբեն Խաչատրյանի գնահատմամբ, «Արտիսի» թիմն այգուն ապահովում է EAZA ուղեցույցների վերաբերյալ հարցերի, այգու կառավարման և այգու գլխավոր հատակագծի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն:

«Անչափ բարձր ենք գնահատում «Արտիսի» աջակցությունը և շնորհակալություն հայտնում Երևանի կենդանաբանական այգու, Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի քաղաքացիների անունից»,-նշում է Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը:

Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանի այցը Թբիլիսիի կենդանաբանական այգի



Մարտի 31-ից ապրիլի 2-ը Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը գործնական այցով մեկնել էր Վրաստան՝ հանդիպելու Թբիլիսիի կենդանաբանական այգու տնօրեն Չուրաբ Գուրիելիդձեին: Հանդիպման արդյունքում երկու այգիների միջև երկարատև համագործակցության հեռանկարներ ստեղծվեցին, ինչն ամրագրվեց երկկողմ չամագործակցության հուշագրի ստորագրմամբ:

Մոտ ապագայում համագործակցություն է հաստատվելու երկու այգիների կրթական կենտրոնների միջև: Ի հավելումս, Երևանի և Թբիլիսիի կենդանաբանական այգիները նախատեսում են իրականացնել կենդանիների փոխանակում այգիների միջև:

Հիշեցնենք, որ ինչպես Երևանի, այնպես էլ Թբիլիսիի կենդանաբանական այգիները EAZA-ի (Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիա) թեկնածու անդամ են:



Մայիսի 1-ին Երևանի կենդանաբանական այգին պաշտոնապես ազդարարեց տարեշրջանի բացումը: Առավոտյան ժամը՝ 10:00-ից փոքրիկները և նրանց ուղեկցող ծնողներն արդեն հավաքվել էին կենդանաբանական այգու մոտ և սպասում էին այգու պաշտոնական բացման արարողությանը: Իսկ տարեշրջանի բացումն ավելի քան գրավիչ էր: Այգու մուտքի մոտ փոքրիկ այցելուներին դիմավորում էին սիրված հեքիաթների հերոսները և ծաղրածուները, կազմակերպվել էին մի շարք թատերական և երաժշտական միջոցառումներ: Ի դեպ, տարեշրջանի բացման օրն իր տիկնոջ և երեխաների հետ այգի էր այցելել նաև Երևանի քաղաքապետը: Նույն օրը տեղի ունեցավ նաև Երևանի կենդանաբանական այգու Նոր կանգառի բացման արարողությունը, որը գտնվում է մայրաքաղաքի Իսահակյան փողոցում՝ մետրոյի «Երիտասարդական» կայարանի հարևանությամբ: Նոր ավտոբուսի կանգառի կառուցումը հնարավոր դարձավ HSBC Հայաստան բանկի աջակցության շնորհիվ: Կանգառում տեղադրված է փոքր տաղավար, որտեղ վաճառվում են այգու տոմսեր, փոքր հուշանվերներ, ինչպես նաև այգու «Ձու» ամսագիրը: Կանգառի արտաքին տեսքն ուշագրավ է իր յուրահատուկ և գեղեցիկ ոճով, որի տանիքին կարող եք նկատել Նույնիսկ երկու թռչնաբույս: Ավտոբուսը շարժվում է յուրաքանչյուր 30 րոպեն մեկ՝ այցելուներին արագ և հարմարավետ հասցնելով Երևանի կենդանաբանական այգի:



Արևաշող այս հիանալի օրվա վերջում շուրջ 35,000 քաղաքացիներ այցելեցին այգի: Օրը լի էր անմոռաց տպավորություններով, երաժշտական և թատերական միջոցառումներով, խաղարկություններով և հաճելի անակնկալներով:

Թռչունների միջազգային օրվան նվիրված նկարչական մրցույթ



Ապրիլի 1-ին՝ թռչունների պահպանության միջազգային օրը, Երևանի կենդանաբանական այգին հայտարարում է նկարչական մրցույթ՝ «Քո սիրելի թռչունը» խորագրով, որը տեղի կունենա Երկրի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում:

Այցելելով Երևանի կենդանաբանական այգի՝ 5-16 տարեկան երեխաները կարող են ընտրել այգում բնակվող թռչուններից որևէ մեկին և իրենց պատկերացումները հանձնել թղթին: Ավարտելով նկարը՝

այն պետք է թողնել այգու պահակակետում, նկարի հետևում նշելով բոլոր կոնտակտային տվյալները՝ անուն, ազգանուն, տարիք, հասցե, հեռախոսահամար և այլն:

Մրցույթը մեկնարկում է 2013 թվականի ապրիլի 1-ին և ավարտվում հունիսի 30-ին: Նկարչական մրցույթն ունի կրթաճանաչողական և ստեղծագործական բնույթ, որը հնարավորություն կտա մասնակիցներին ոչ միայն շահել մրցանակներ, այլ նաև ձեռք բերել խորը գիտելիքներ թռչունների վարքագծի և կենսապայմանների վերաբերյալ: Գլխավոր մրցանակը հեծանիվ է:

Այցելելով Երևանի կենդանաբանական այգի անհրաժեշտ նկարչական պարագաներով՝ դուք ևս կարող եք մասնակցել մրցույթին և շահել հեծանիվ:

Հարցերի և այլ անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (+37410) 555209 հեռախոսահամարով կամ էլ. նամակ ուղարկել birds@yerevanzoo.am էլ. հասցեին: